ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» հունիսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Արթուր Ասատրյանը:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 10-րդ օրվա (06.06.2022թ.)՝ ժամը 11:00-ն,
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 07.06.2022թ.՝ ժամը 11:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ.

- 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով գնման հայտով սահմանված է ընթացակարգը կազմակերպելու տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրով սահմանված մեկ միավորի գները,
- 2-րդ չափաբաժնի մասով գնման հայտով սահմանված է, որ ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր (գործարք) առկա չէ.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Նմանատիպ ապրանքի մեկ միավորի ձեռքբերման գինը (ՀՀ դրամ)	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Օդորակիչ 12000 BTU	210000	8400000
3	Օդորակիչ 24000 BTU	388920	15556800

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Վեգա ուորլդ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Թումանյան 4/1
ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ	ք. Երևան, Գ. Նժդեհի 21
ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	ք. Երևան, Խորենացի փ., շ. 72/12
ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	Ավան, Հ. Հովհաննիսյան 24/7

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	Վեգա ուորլդ ՍՊԸ	6166666.67	20%	7400000	6166666.67	20%	7400000	

1	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ	7000000	20%	8400000	7000000	20%	8400000	
1	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	13320000	20%	15984000	13320000	20%	15984000	Մերժված
1	ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	50000000	20%	60000000	50000000	20%	60000000	Մերժված
2	Վեգա ուորլդ ՍՊԸ	4666666.67	20%	5600000	4666666.67	20%	5600000	
2	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ	5833333.34	20%	7000000	5833333.34	20%	7000000	
2	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	9320000	20%	11184000	9320000	20%	11184000	
2	ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	50000000	20%	60000000	50000000	20%	60000000	
3	Վեգա ուորլդ ՍՊԸ	11666666.67	20%	14000000	11666666.67	20%	14000000	
3	ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ	14166666.67	20%	17000000	14166666.67	20%	17000000	Մերժված
3	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	20440000	20%	24528000	20440000	20%	24528000	Մերժված
3	ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	50000000	20%	60000000	50000000	20%	60000000	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 07.06.2022թ.՝ ժամը 11:32-ին և 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով Վեգա ուորլդ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Վեգա ուորլդ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ Վեգա ուորլդ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի (հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8.1. Ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

8.2. Ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (այսուհետ՝ Հայտարարագիր) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝

- Հայտարարագրի հավելվածին վերաբերող տեղեկատվության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգը՝ **«Էլեկտրոնային աճուրդի հրավերի»** բառերի փոխարեն նշված է «գնանշման հարցման հրավերի» բառերը, ինչպես նաև Հայտարարագրի հավելվածի համարը նշված է «2», այն դեպքում, երբ հրավերով իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը սահմանված է N 1.2 հավելվածով.
- Հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «4.5.1. Մասնակցության չափը (%)» և «4.5.2. Մասնակցության տեսակը» դաշտերում կատարված են համապատասխան նշումներ, սակայն «ա.» կետում որևէ նշում կատարված չէ:

Միաժամանակ հրավերով ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի լրացման կարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ հայտարարագրի «4.7. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի **«4.7.3. Ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպության իրական շահառուն հանդիսանում է պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ»** դաշտի տեղեկատվությունը վերաբերում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձանց, ուստի հաշվի առնելով, որ մասնակցի կողմից լրացված են հայտարարագրի «4.5. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը **(բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)**» ենթաբաժնի համապատասխան դաշտերը, տվյալ դեպքում հայտարարագրի **4.7.3.-րդ** դաշտում կատարված նշումն ավելորդ է:

8.3. 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. հունիսի 10-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ Վեգա ուորլդ ՍՊԸ-ի հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հունիսի 09-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «10» հունիսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Արթուր Ասատրյանը:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/30» ծածկագրով ընթացակարգի շրջանակում Վեգա ուորլդ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

Վեգա ուորլդ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

Վեգա ուորլդ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտերի վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով Վեգա ուորլդ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից.

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակցի՝ ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի հայտը մերժել.
- 2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ-ի, ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի հայտերը մերժել:

2.2. 1-ին չափաբաժնի մասով՝ ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ-ի, ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի, 3-րդ չափաբաժնի մասով՝ ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ-ի, ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան